

## Բացատրագիր

Նախագծի «Հակահրդեհային համակարգ» մասն իրականացվում է Ճարտարա-պետա-շինարարական գծագրերի հիման վրա:

Նախատեսված է հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգ, համաձայն գործող նորմերի ու կանոնների (ՀՀՇՆ II-8.04.01-97, ՀՀՇՆ II-8.04.02-05 ): Նախագծման ընթացքում հաշվի են առնվել նաև ՌԴ ՆՊԲ 88-01-«Հրդեհաշիջման և հրդեհի ահագանգման սարքավորանք Նախագծման նորմաներ և կանոններ» փաստաթղթի պահանջները:

Համակարգը նախատեսված է հսկվող տարածքներում հրդեհի հայտնաբերման, տեղում տագնապի ազդարարման և համապատասխան ծառայություններին տեղեկացման համար:

Որպես ընդունիչ-հսկիչ սարք նախատեսված է Nx 8, տիպի սարքը Nx148 տիպի ստեղնաշարով և Nx216 տիպի ընդարձակման սարքով, որն ապահովում է հրեփային զոնաների շուրջօրյա հսկողությունը: Այն սարքավորված է ID տազնապային ելքով, որը հնարավորություն կտա ԱԽՆ ՃԿԿ 911 ծառայությանը տազնապայ ակնթարթային տեղեկացմանը, ինչպես նաև 256 քայլի հիշողությամբ, ուր գրանցվում են տազնապաները, հուսանքագրվում են նրանք և այլն: Սարքը տեղակայվում է 1-ին հալունով, պահակի սենյակում՝ մուտքի մոտ: Սարքի վրա օգտագործված է 15 ճառագայթ: Դր հնարավորություն է ընձեռնում հետազայում սարքին միացվել նաև առանձին սենյակների և հարկաբաժինների պահպանության բնագծեր: Ճառագայթների վերջում տեղակայվում են վերջնական էլեմենտները, որոնք մտնում են սարքերի լրակազմի մեջ:

Որպես հողեփի ազդասարքեր օգտագործված են System Sensor՝ ֆիրմայի ինքնաշխատ օպտիկական ծխային ECO-1003 տվիչ սարքեր իրենց B412R տիպի ռեելային ելքեր ունեցող հիմքերով: Միևնույն ճառագայթի մեջ գտնվող ազդասարքերի հիմքերի ռեելների նորմալ փակ կոնտակտները հաջորդաբար միացվում են այնպես, որ ազդասարքի հանվելը հիմքով կամ ազդասարքի թողարկումը խզի բնագծի ամբողջականությունը, որն էլ ընդունիչ-հսկիչ սարքի կողմից կընդունվի որպես «SQUAD»): Ազդասարքերի տեղակայումը պետք է իրականացվի համաձայն գործող նորմերի, հաշվի առնելով առաստաղի կառուցվածքային առանձնափափակություններն ու լուսատու սարքերի փաստացի տեղաբաշխումը:

Ազդանշանման ցանցն իրականացվում է բաց եղանակով, ուղղաձիգ հատվածները՝ սակառների (короб) մեջ, 4x0.22, 8x0.22, 8 0,22 և 10x0.22 տիպի մալուխներով: Համակարգի էլ.սնուցումն իրականացվում է 220Վ լարման բաշխիչ վահանակից առանձին ավտոմատ անջատիչից 2x0.5 հաղորդալարով: Լարային ցանցը պատկերված է պայմանականորեն և ենթակա է ճշգրտման տեղում՝ աշխատանքների իրականացումից առաջ:

Հրդեհի ազդարարման դեպքում շենքում գտնվող մարդկանց իրազեկման նպատակով յուրաքանչյուր հարկում տեղակայված են լուսաձայնային ազդարարիչներ, գիշերային ժամերին «ՏԱԳՆԱՊ» ազդանշանը առավել ընկալելի դարձնելու համար: Դրանց միացումը համակարգին իրականացվում է 2x0.22 հաղորդալարով:

«ՏԱԳՆԱՊԻ» ղեկավարում երեխաների, ուսուցչական և սպասարկող աշխատակիցների կազմակերպված տարիանունն ապահովելու նպատակով տնօրինության կողմից պետք է կազմվեն տարիանման սխեմաներ և նշանակվեն պատասխանատուներ:












Տեսահսկման ենթահամակարգում նախատեսված են Վարիֆոկալ օբեկտիվով, անշարժ, 700 TVL որակի մինիատյուր ներկառուցված ինֆրակարմիր լուսավորությամբ, թվով 14 արտաքին և 1 ներքին տեսախցիկներ, որոնց ազդանշանները տեսագրվում են 16 մուտքանի թվային տեսագրիչի 2 TB կոշտ սկավառակի վրա: Պետք է ակտիվացված լինի «Շարժման դետեկտոր»|ֆունկցիան, որով կիրականացվի պահպանությունը և կբարձրանա կոշտ սկավառակի օգտագործման էֆեկտիվությունը: Նախատեսված է 27» մոնիտոր (հեռուստացույց), որով իրականացվելու է տեսագրության վերադիտում կամ ուղղակի «կենդանի» դիտարկում: Տեսագրիչն ու մոնիտորը նախատեսվում է տեղակայել պահակի սենյակում Համակարգի էլ.սնուցումն իրականացվում է 220V լարման բաշխիչ վահանակից առանձին ավտոմատ անջատիչից, իսկ հոսանքազրկումների դեպքերում՝ CAT-1200 տիպի 12 կոլտ լարմամբ անկախ սնուցման սարքից: Համակարգի ընդունիչ-հսկիչ սարքերն ու անկախ սնուցման սարքերը պետք է հողակցվեն համաձայն ԵՍՀ-ի, ՄՆԻՊ 3.05.06-ի և սարքերի տեխնիկական փաստաթղթերի պահանջների:


Համակարգում ներառված է ծրագրավորվող ինքնաշխատ էլ. զանգ՝ ժամացույցի էլ. ցուցատախտակով, որը հնարավորություն է տալիս կարգավորել գործարկման ժամանակը պարբերականությունը և նախապես ներբեռնված երաժշտական զանգերի ընտրությունը: Էլ զանգի արտաբերումն իրականացվում է թվով 12 (նվազագույնը 20 Կտ հզորությամբ) բարձրախոսներով, որոնք ՈՒՅԳ 2x0.5 հաղորդալարով միացված են էլ. զանգին կից համապատասխան հզորությամբ Ձայնի ուժեղացուցչին:

Համակարգի սարքավորման ընթացքում թույլատրվում է այլ համանման սարքերի և նյութերի կիրառումը, եթե դրանք չեն վատթարացնում ընդհանուր համակարգի տեխնիկական և սպառողական հատկությունները:

Հ/Հ	Անվանումը	Մակնիշը	Չափի միավորը	Քանակը
1	Ընդունող հսկող սարք	Nx8, Nx148	լրկ.	1
2	Ջնոնների ընդարձակման սարք	Nx216	լրկ.	1
3	Ծրագրավորվող էլ զանգ	ELZ-R 20/12	լրկ.	1
4	Հրդեհի ծխի տվիչ սարք	ECO 1003	լրկ.	190
5	Հրդեհի ձեռքի տվիչ սարք	BS-BF GBCP911	հատ	14
6	Լուսածայնային ազդարարիչ	AD - 103	հատ	12
7	Էլ. զանգի բարձրախոս	ГГ 20	հատ	12
8	Հաղորդակար 4*0,22 մմ <sup>2</sup>	CQR 4	մ	1750
9	Հաղորդակար 6*0,22 մմ <sup>2</sup>	CQR 6	մ	40
10	Հաղորդակար 8*0,22 մմ <sup>2</sup>	CQR 8	մ	68
11	Հաղորդակար 10*0,22 մմ <sup>2</sup>	CQR 10	մ	136
12	Հաղորդակար 2*0,5 մմ <sup>2</sup>	ППВГ	մ	390
13	Միացման տուփ 85x85x40		հատ	17
14	Մարտկոց 12Վ/7Ա		հատ	2
15	Սակառ (короб) 25x38		մ	24
16	Ամրացման պարագաներ (дюбель/якорь)		հատ	500
17	Ամրացման պարագաներ (скоба N1,N2)		հատ	10000

## Պայմանական Նշաններ

Ընդունող հսկող սարք		
Ջոնաների ընդաձայնման սարք		
Ծրագրավորվող էլ. զանգ		
Հրդեհի ծխի տվիչ սարք		
Հրդեհի ձեռքի տվիչ սարք		
Լուսաձայնային ազդարարիչ	 cc	
Միացման տուփ 85x85x40		
Տեսաձայնագրող սարք DVR		
Սնուցման սարք 220/12Վ/ 10Ա		
Տեսախցիկ		
Բարձրախոս էլ.զանգի	 Դр20	

 ՀՀ ՆԻՅՈՒԹԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԸՆԴՆԱԾՈՒԹՅԱՆ ԿՈԹԵՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԼՂԾ	Է.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	<i>Պրոքուրոր</i>	ՀՀ ԳԵՆԱՐԱԹՈՒՆԻԹԻ ՄԱՐԶԻ ԶՈՒԱԶԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ				
	ԶԱՐՏԱՐԱԳԵՑ	Ա.ՓԱՂԵԿԱՆՅԱՆ		ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ԱԾԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ		Փուլ	Թերթ	Թերթեր
						ԱՆ	ՀԱՅ- 1	5
	Հիմնադրվել է 1995 թ. 11-01-01				ԲԱՅԱՏՐԱԳԻՐ, ՄԱՐԶԱԿՈՐՈՒՄԵՐԻ ՄԱՆՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ		ՊԱՏԿԵՐ ԲԵՐՈՋՔ-15/2 ԱՌՈՑ ՄԱՅԻՍԻ 2015	
	Հիմնադրվել է 1995 թ. 11-01-01							
Հիմնադրվել է 1995 թ. 11-01-01								